ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 5. Կարգավորողի գործառույթները

2) կարգավորել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը և ծառայությունները սույն օրենքին համապատասխան, որի ապահովման համար՝

ժբ) սույն օրենքի դրույթները կամ լիցենզիայի կամ թույլտվության պայմանները կամ Կարգավորողի ընդունած իրավական ակտերը (ներառյալ՝ կանոնները և կանոնակարգերը) խախտելու համար կիրառել պատժամիջոցներ, այդ թվում՝ տույժեր և տուգանքներ, իսկ համապատասխան դեպքերում՝ լիցենզիայի կամ թույլտվության փոփոխում, կասեցում կամ դատարան ներկայացնել դադարեցման դիմում: ~~Կարգավորողը պարտավոր է հանրային խորհրդակցությունից հետո հաստատել կանոններ և կարգեր՝ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ,~~

իթ) սահմանել կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու կարգ.

~~Հոդված 12. Լիցենզիաների և թույլտվությունների կասեցումը կամ դադարեցումը~~

~~1. Կարգավորողն իրավասու է կասեցնել լիցենզիան կամ լիցենզիայի դադարեցման համար դիմել դատարան՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով: Կարգավորողն իրավասու է կասեցնել կամ դադարեցնել ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունը՝ իր կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն:~~

~~2.Ի լրումն «Լիցենզավորման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կասեցման կամ դադարեցման հիմքերի, Կարգավորողն իրավասու է կասեցնել կամ լիցենզիայի դադարեցման դիմում ներկայացնել դատարան, ինչպես նաև կասեցնել կամ դադարեցնել ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունը, եթե՝~~

~~1) կարգավորվող անձը դիտավորյալ կեղծ տեղեկություն է ներկայացրել լիցենզիայի կամ թույլտվության համար իր ներկայացրած դիմումի կամ Կարգավորողին տրամադրված ցանկացած հայտարարության մեջ.~~

~~2) կարգավորվող անձը դիտավորյալ չի տրամադրել այնպիսի տեղեկություններ կամ ապացույցներ, որոնք կհանգեցնեին այդ լիցենզիայի կամ թույլտվության տրամադրելը մերժելուն.~~

~~3) կարգավորվող անձը դիտավորյալ խախտել է սույն օրենքը կամ դրա համաձայն ընդունված որևէ կանոն կամ կանոնակարգ.~~

~~4) կարգավորվող անձը դիտավորյալ չի կատարել իր լիցենզիայի կամ թույլտվության պայմանները.~~

~~5) կարգավորվող անձը խախտել է կամ չի կատարել սույն օրենքի 60-րդ հոդվածի համաձայն տրված դադարեցման մասին հրահանգը.~~

~~6) կարգավորվող անձը չի վճարել դիմումի կամ լիցենզիայի կամ թույլտվության գործողության երկարացման վճարը կամ համընդհանուր ծառայությունների որևէ վճար.~~

~~7) կասեցումը կամ դադարեցումն անհրաժեշտ է ազգային անվտանգության կամ հանրային շահի նկատառումներով:~~

~~3. Սույն հոդվածով սահմանված կասեցման և դադարեցման դրույթները չեն տարածվում պատմականորեն գերիշխող օպերատորի լիցենզիայի վրա: Բացառիկության իրավունքից օգտվելու ողջ ժամանակահատվածում պատմականորեն գերիշխող օպերատորը ղեկավարվում է իր լիցենզիայով սահմանված պայմաններով:~~

Հոդված 12. Լիցենզիաների և թույլտվությունների կասեցումը կամ դադարեցումը

1. Ի լրումն սույն օրենքով սահմանված դեպքերի, լիցենզիան կամ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվությունը կասեցվում կամ դադարեցվում են «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով և Կարգավորողի կողմից սահմանված առանձնահատկությունները:

Հոդված 12.1. Ծանուցում ներկայացրած անձանց գործունեության կասեցումը և դադարեցումը

1. Կարգավորողն իրավասու է կասեցնել ծանուցում ներկայացրած անձանց գործունեությունը ծանուցված գործունեության մասով, եթե՝

1) ծանուցում ներկայացրած անձը ~~դիտավորյալ~~ կեղծ տեղեկություն է ներկայացրել ծանուցման կամ Կարգավորողին տրամադրված ցանկացած հայտարարության մեջ.

2) ծանուցում ներկայացրած անձը ~~դիտավորյալ~~ խախտել է սույն օրենքը կամ դրա համաձայն ընդունված որևէ կանոն կամ կանոնակարգ.

~~**Հոդված 14. Կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցումը**~~

~~1. Ցանցի լիցենզիա կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցելու նպատակով ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստացած անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) նկատմամբ իրավունքի օտարում կամ այլ կերպ փոխանցում կամ զիջում կամ գրավադրում կամ այդ անձի գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կանխորոշելու հնարավորություն ունեցող անձի փոփոխություն կարող է իրականացվել միայն Կարգավորողի համաձայնությունը կարգավորվող անձի կողմից ստանալուց հետո:~~

~~1.1. Սույն հոդվածի 1-ին մասում չնշված կարգավորվող անձանց բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելու համար Կարգավորողի համաձայնությունը չի պահանջվում, և սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելուց 15 աշխատանքային օր առաջ կարգավորվող անձը պարտավոր է դրա մասին գրավոր տեղեկացնել Կարգավորողին:~~

~~2. Եթե Կարգավորողը համարի, որ փոխանցման արդյունքում փոխվելու է կարգավորվող անձի գործունեությունը կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը, ապա նա իրավասու է համաձայնություն չտալ, եթե համարի, որ այդ անձը չունի անհրաժեշտ որակավորում կամ որ փոխանցումը սպառնում է ազգային անվտանգությանը:~~

~~3. Եթե Կարգավորողը համարի, որ փոխանցման արդյունքում չի փոխվելու փաստացի սեփականատերը կամ կարգավորվող անձի գործունեությունը կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը, ապա նա պարտավոր է տալ իր համաձայնությունը:~~

~~4. Պատմականորեն գերիշխող օպերատորի փաստացի սեփականատերը կարող է փոխանցել, վաճառել, տրամադրել կամ ցանկացած այլ ճանապարհով տնօրինել պատմականորեն գերիշխող օպերատորի բաժնետոմսերի մինչև 20 տոկոսը առանց Կարգավորողի նախնական համաձայնության:~~

~~5. Պատմականորեն գերիշխող օպերատորի փաստացի սեփականատերը, Կարգավորողի նախնական համաձայնությամբ, մեկ կամ ավելի գործարքների արդյունքում կարող է փոխանցել, վաճառել, տրամադրել կամ ցանկացած այլ ճանապարհով տնօրինել պատմականորեն գերիշխող օպերատորի բաժնեմասերի մինչև 20 տոկոսը կամ ավելին՝ այդպիսով պատմականորեն գերիշխող օպերատորի իր մասնաբաժինը հասցնելով 70 տոկոսի կամ ավելի քիչ: Կարգավորողը տալիս է իր համաձայնությունն այն դեպքում, երբ այդպիսի փոխանցումը, վաճառքը, տրամադրումը կամ ցանկացած այլ ճանապարհով տնօրինումը չի հակասում պետական շահերին:~~

~~6. Գերիշխող դիրք ունեցող կարգավորվող անձի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելու մասին Կարգավորողը պարտավոր է ծանուցել «Պաշտոնական տեղեկագրում»:~~

~~7. Կարգավորողը սույն հոդվածին համապատասխան կարգավորվող անձի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելու համաձայնությունը տալիս է՝ նախապես համաձայնեցնելով իրավասու մարմնի հետ:~~

Հոդված 14. Կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցումը

1. Ցանցի լիցենզիա կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցելու նպատակով ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստացած անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) նկատմամբ իրավունքի օտարում, այլ կերպ փոխանցում, զիջում կամ գրավադրում, ինչպես նաև այդ անձի գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ թանակից, օտարում, այլ կերպ փոխանցում, զիջում կամ գրավադրում կարող է իրականացվել միայն Կարգավորողի համաձայնությունը

կարգավորվող անձի կողմից ստանալուց հետո: Առանց սույն մասում նշված համաձայնության կնքված կամ դրա կնքմանը համաձայնություն տալու մասին հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմաններին չհամապատասխանող գործարքն առոչինչ է:

2. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով անձի գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կանխորոշելու հնարավորությունը իրավաբանական կամ ֆիզիկական անձի՝ իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները կանխորոշելու հնարավորությունն է, որը դրսևորվում է տվյալ իրավաբանական անձի՝

1) կառավարման և (կամ) ղեկավարման մարմինների ընտրության և (կամ) վերջիններիս գործառույթների իրականացման ձևով,
2) ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանները սահմանելու ձևով,
3) համար կատարման ենթակա հանձնարարականներ (ցուցումներ) տալու ձևով,
4) որոշումների կանխորոշման ձևով այնպիսի իրավաբանական կամ ֆիզիկական անձի միջոցով, որն ունի տվյալ իրավաբանական անձի գործունեությունն ուղղակիորեն կանխորոշելու հնարավորություն (անուղղակի կանխորոշում),
5) գործունեությունն այլ եղանակով ուղղակիորեն կամ անուղղակիորեն կանխորոշելու ձևով, այդ թվում՝ կանոնադրական կապիտալում մասնակցության կամ պայմանագրի ուժով, ինչպես նաև այլ՝ օրենքով չարգելված ձևով:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործարքի համաձայնեցումը կարող է մերժվել, եթե համաձայնություն ստանալու համար ներկայացված փաստաթղթերը և (կամ) տեղեկատվությունը չեն համապատասխանում Կարգավորողի սահմանած կարգի պահանջներին, ինչպես նաև իրավասու մարմնի գնահատմամբ վնասում է կամ կարող է վնասել ազգային անվտանգությունը կամ պետական շահերը, իսկ մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով տրամադրված լիցենզիայի կամ թույլտվության առկայության դեպքում, երբ չի հիմնավորվում անհրաժեշտ փորձի առկայությունը:

4. Կարգավորողը սույն հոդվածին համապատասխան կարգավորվող անձի նկատմամբ հսկողության փոխանցման համաձայնությունը տալիս է՝ նախապես համաձայնեցնելով իրավասու մարմնի հետ:

Հոդված 51. Ծառայության կամ ենթակառուցվածքների ոչ պատշաճ օգտագործումը

Օպերատորը կամ ծառայություններ մատուցողը, որը գիտակցաբար թույլ է տալիս, որպեսզի իր ցանցը կամ ծառայություններն օգտագործվեն որևէ անձի կողմից այլ անձանց խաբեության ենթարկելու, նրանց նկատմամբ բռնություն, չարամտություն, սպառնալիքներ կամ շանտաժ կիրառելու նպատակով, ենթարկվում է սույն ~~օրենքի 63-րդ հոդվածով նախատեսված տույժի, որը չպետք է գերազանցի հինգ միլիոն դրամը~~ օրենքով սահմանված կարգով պատասխանատվության:

~~**Հոդված 63. Տույժերը և տուգանքները**~~

~~1. Եթե ծանուցումից և լսումներից հետո Կարգավորողը որոշում է, որ կարգավորվող ֆիզիկական անձը չի կատարել սույն օրենքի որևէ դրույթ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրել, որպեսզի իրավախախտ կարգավորվող անձը վճարի տույժ կամ տուգանք, որը առնվազն պետք է կազմի նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, սակայն չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը: Եթե Կարգավորողը որոշում է, որ այդ խախտումը թույլ է տրվել կարգավորվող անձի իմացությամբ կամ դիտավորյալ, կամ էլ խախտումը թույլ է տրվել մեկ տարվա ընթացքում մեկ անգամից ավելի, նա կարող է կարգադրել, որպեսզի իրավազանց կարգավորվող անձը վճարի լրացուցիչ տույժ կամ տուգանք, որը պետք է կազմի նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:~~

~~2. Եթե Կարգավորողը ծանուցումից և լսումներից հետո որոշում է, որ կարգավորվող իրավաբանական անձը չի կատարել սույն օրենքի որևէ դրույթ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրել, որպեսզի իրավախախտ կարգավորվող անձը վճարի տույժ կամ տուգանք, որը առնվազն պետք է կազմի նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը, սակայն չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը:- Եթե Կարգավորողը որոշում է, որ այդ խախտումը թույլ է տրվել կարգավորվող անձի իմացությամբ կամ դիտավորյալ, կամ էլ խախտումը թույլ է տրվել մեկ տարվա ընթացքում մեկ անգամից ավելի, ապա նա կարող է կարգադրել, որպեսզի~~

~~իրավազանց կարգավորվող անձը վճարի լրացուցիչ տույժ կամ տուգանք, որը պետք է կազմի նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը:~~

~~3. Եթե ծանուցումից և լսումներից հետո Կարգավորողը որոշում է, որ կարգավորվող ֆիզիկական անձը չի կատարել իր լիցենզիայի կամ թույլտվության որևէ պայման կամ Կարգավորողի կանոնների կամ կանոնակարգերի որևէ դրույթ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրել, որպեսզի իրավախախտ կարգավորվող անձը վճարի տույժ կամ տուգանք, որը առնվազն պետք է կազմի նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը, սակայն չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի հազարապատիկը: Եթե Կարգավորողը որոշում է, որ այդ խախտումը թույլ է տրվել կարգավորվող անձի իմացությամբ կամ դիտավորյալ, կամ էլ խախտումը թույլ է տրվել մեկ տարվա ընթացքում մեկ անգամից ավելի, ապա նա կարող է կարգադրել, որպեսզի իրավազանց կարգավորվող անձը վճարի լրացուցիչ տույժ կամ տուգանք, որը պետք է կազմի նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:~~

~~4. Եթե ծանուցումից և լսումներից հետո Կարգավորողը որոշում է, որ կարգավորվող իրավաբանական անձը չի կատարել իր լիցենզիայի կամ թույլտվության որևէ պայման կամ Կարգավորողի կանոնների կամ կանոնակարգերի որևէ դրույթ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրել, որպեսզի իրավախախտ կարգավորվող անձը վճարի տույժ կամ տուգանք, որը առնվազն պետք է կազմի նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, սակայն չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը: Եթե Կարգավորողը որոշում է, որ այդ խախտումը թույլ է տրվել կարգավորվող անձի իմացությամբ կամ դիտավորյալ, կամ էլ խախտումը թույլ է տրվել մեկ տարվա ընթացքում մեկ անգամից ավելի, ապա նա կարող է կարգադրել, որպեսզի իրավազանց կարգավորվող անձը վճարի լրացուցիչ տույժ կամ տուգանք, որը պետք է կազմի նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:~~

~~4.1. Սույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դադարեցման կարգադրություն արձակելուց հետո, եթե ծանուցման և լսումների արդյունքում Կարգավորողը որոշում է, որ ֆիզիկական անձն առանց Կարգավորողի թույլտվության շարունակում է օգտագործել ռադիոհաճախականություններ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրելու, որ իրավախախտ ֆիզիկական անձը վճարի տույժ կամ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:~~

~~4.2. Սույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դադարեցման կարգադրություն արձակելուց հետո, եթե ծանուցման և լսումների արդյունքում Կարգավորողը որոշում է, որ իրավաբանական անձն առանց Կարգավորողի թույլտվության շարունակում է օգտագործել ռադիոհաճախականություններ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրելու, որ իրավախախտ իրավաբանական անձը վճարի տույժ կամ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով:~~

~~4.3. Ծանուցում չներկայացրած հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցած իրավաբանական կամ ֆիզիկական անձի նկատմամբ սույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դադարեցման կարգադրություն արձակելուց հետո, եթե ծանուցման և լսումների արդյունքում Կարգավորողը որոշում է, որ իրավաբանական կամ ֆիզիկական անձն առանց Կարգավորողին ծանուցելու շարունակում է մատուցել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրելու, որ իրավախախտ իրավաբանական կամ ֆիզիկական անձը վճարի տույժ կամ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:~~

~~5. Եթե ծանուցումից և լսումներից հետո Կարգավորողը որոշում է, որ կարգավորվող ֆիզիկական կամ իրավաբանական անձը չի կատարել Կարգավորողի՝ ծառայության անընդհատության վերաբերյալ հրահանգը, ապա Կարգավորողն իրավասու է կարգադրել, որպեսզի իրավախախտ կարգավորվող անձը վճարի տույժ կամ տուգանք, որը առնվազն պետք է կազմի նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը, սակայն չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը:~~

~~6. Կարգավորողի կողմից կիրառվող բոլոր տույժերն ու տուգանքները վճարվում են Հայաստանի~~

Հոդված 63. Կարգավորողի կողմից կիրառվող պատասխանատվությունը

1. Կարգավորվող անձի կողմից սույն օրենքով, Կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կարգավորողն իրավասու է կիրառել սույն օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, վերականգնել մինչև խախտումը եղած դրությունը, կատարել դրանից բխող

գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնատկությունները:

2. Կարգավորվող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անձի, սույն օրենքով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ՝ առաջացնում է նախազգուշացում:

3. Կարգավորվող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անձի, սույն օրենքով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման, կամ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող այլ անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտմանը, լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարմանը, ինչպես նաև հաճախորդների տեղեկությունների գաղտնիության պահպանման վերաբերյալ պահանջի խախտումը, կարգավորվող անձի կողմից իր ծառայությունների կամ ենթակառուցվածքների ապօրինի օգտագործման տրամադրումը կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում:

4. Կարգավորվող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անձի, Կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի այլ մասերով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ՝ առաջացնում է նախազգուշացում:

5. Կարգավորվող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անձի, Կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների

իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման, կամ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող այլ անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարմանը, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում:

6. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տարեկան հինգ հարյուր միլիոն դրամ գումարը գերազանցող շրջանառություն ունեցող կարգավորվող անձի կողմից սույն օրենքով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ՝ առաջացնում է նախազգուշացում:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անձի կողմից սույն օրենքով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող այլ անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտմանը, լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարմանը, ինչպես նաև կարգավորվող անձի նկատմամբ հսկողության փոխանցման վերաբերյալ համաձայնություն ստանալու պահանջի խախտումը, կամ հաճախորդների տեղեկությունների գաղտնիության պահպանման վերաբերյալ պահանջի խախտումը, կարգավորվող անձի կողմից իր ծառայությունների կամ ենթակառուցվածքների ապօրինի օգտագործման տրամադրումը կամ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանք՝ բսան միլիոն դրամից բառասուն միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անձի կողմից Կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի այլ մասերով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ, առաջացնում է նախազգուշացում:

9. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անձի կողմից Կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող այլ անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտմանը, լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարմանը, կամ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում, կամ լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում:

10. Սույն օրենքի 60-րդ հոդվածի համաձայն՝ դադարեցման կարգադրությունն արձակելուց հետո առանց Կարգավորողի թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործումը շարունակելը, կամ ծանուցում չներկայացրած հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձի կողմից էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցումը շարունակելը առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամի չափով:

11. Եթե Կարգավորվող անձի կողմից չկատարված կամ ոչ պատշաճ կատարված պահանջը միաժամանակ սահմանված է և սույն օրենքում, և Կարգավորողի իրավական ակտում, ապա Կարգավորվող անձի նկատմամբ պատասխանատվության միջոցը կիրառվում է սույն օրենքի պահանջի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար: